

ԳՐԱԲԱՐԻ ՀԱՄԱԴՐԱԿԱՆ ՊԱՏՃԱՌԱԿԱՆ
ԲԱՅԵՐԻ ԱՐԺՈՒՅԹԸ

ԳՈՒՐԳԵՆ ԽԱԶԱՏՐՅԱՆ

Գրաբարի պատճառական բայերը և դրանց արժույթն առ այսօր հատուկ քննությունն են ստանում: Այս աշխատանքում նպատակ է հետապնդվում ուսումնասիրել գրաբարի համագրական պատճառական բայերի՝ կառուցվածքային առանձնահատկությունները, դրանց միմյանց հետ ունեցած ձևախմբաստային առնչությունները և արժույթի դրսևորումներից մեկը՝ ենթակաառությունը:

Գրաբարի բայերը կազմություններ կուտակ են՝ ա) պարզ և բ) ածանցավոր: Վերջիններիս թվին են դասվում նաև պատճառական ածանցով ձևավորված բայերը, որոնք այլ կերպ կոչվում են պատճառական բայեր: Օրինակ՝ ազնուացուցանել, թախանձեցուցանել, համբուրեցուցանել, հեծուցանել, ցնծացուցանել և այլն:

Գրաբարի բառապաշարի մեջ, ըստ մեր հաշվարկների, համագրական պատճառական բայերը փոքր թիվ չեն կազմում: Լեզվական աղբյուրներում վկայված են հազարից ավելի պատճառական բայեր: Սակայն պետք է նշել, որ, ըստ դործածաբանական դասակարգման, դրանց միայն մի փոքրաթիվ մասն է կազմում ակտիվ բառապաշարի տարր: Վերջիններից են՝ ասլրեցուցանել, արբուցանել, (զ)անցուցանել, դարձուցանել, զարթուցանել, հասուցանել, հատուցանել, կեցուցանել, չորացուցանել, փոխուցանել և այլն:

Գրաբարյան համագրական պատճառականների շուրջ մեկ քառորդը ոչ միայն ակտիվ բառապաշարի մաս չի կազմում, այլև մեր ձևաբանական և լեզվական աղբյուրներում հազվադեպ (երբեմն ընդամենը մեկական անգամ) է վկայված: Այդ բայերից են՝ ամիրացուցանել¹, աներեւեցուցանել, աստղացուցանել, բազմամարդացուցանել, բնացուցանել, դանգաչեցուցանել, դժպարոնեցուցանել, թթուեցուցանել, խաղուարտեցուցանել («սյուուցանել»), խեցեցուցանել, խորհրդադեցուցանել, կայծակնաճանաչեցուցանել, հողմացուցանել, մռայլեցուցանել, նայացուցանել, նիթացուցանել, որովայնացուցանել, սրտահեշտացուցանել, տաճկացուցանել, փորացուցանել, փոքրոգեցուցանել և այլն:

Ոչ համագործածական պատճառականներից մի քանիսն ակնհայտորեն օտարաբանություններ են, ավելի ճիշտ՝ պարտադիր թարգմանություններ՝ տեղ գտած հատկապես հունա-ասորական դրականություն՝ հայերեն թարգմանությունների մեջ, ինչպես՝ բացադարձուցանել, որովայնադեցուցանել:

1 Հոգվածում դիտարկել ենք գրաբարյան ոչ միայն համաժամանակյա, այլ նաև տարածամանակյա կտրվածքի համագրական պատճառական բայեր:

2 Բազմաթիվ պատճառական բայեր (ամիրացուցանել, տաճկացուցանել և այլն) Հայաստանում կատարված սլավոնահասարակական սեղաշարժերի, փոփոխությունների հավաստի վկայություններն են:

նել, վերաբաղկացուցանել, տարակարծեցուցանել և այլն: Բազմաթիվ պատճառականներ էլ, այսպես կոչված, հետոսկեդարյան և միջինհայերենյան աղբյուրներում վկայված նորաբանություններ են, ինչպես ամպացուցանել (ՆԲՀԼ), անհետացուցանել (ՆԲՀԼ), անհոգացուցանել (ՆԲՀԼ)³, բացանցուցանել (ՆԲՀԼ) և այլն:

Հատկանշական է, որ մի շարք պատճառականներ գրաբարում (այստեղից էլ բառարաններում և համարաբառներում) վկայված են միայն անդեմ ձևերով, ինչպես՝ երկբայեցուցանող, խաղուարտեցուցանել, մերկամարտուցեցալ, յերկուացուցանող, յոռացուցեցալ, պակչոտեցուցանող, ստացուցանել, վերաբուսուցանել, վերարկուցեցալ, քաջալերացուցանել և այլն: Սրան հակառակ՝ բազմաթիվ պատճառական բայեր գրավոր աղբյուրներում վկայված են թե՛ դիմավոր, թե՛ անդեմ ձևերով:

Գրավոր հուշարձաններում վկայված են նաև -իչ և -ելի վերջածանցավոր կազմություններ, որոնք, փաստորեն, դեռևս V դ. ածականին հասուկ կիրառություններ ունեն և բայական համակարգի հետ առնչվում են այնքանով, որ ձևավորվում են -ուցան- պատճառական բայածանցի մասնակցությունը, ինչպես՝ անխոնարհեցուցանելի, անկորացուցանելի, եղրացուցիչ ընկեցուցիչ, խանդարեցուցիչ, ծխացուցիչ, հարկաւորացուցիչ, յայտերևացուցիչ և այլն, որոնց համարմատ պատճառականները կա՛մ չեն եզել, կա՛մ, հակառակ գեպքում, չեն վկայվել դրավոր աղբյուրներում:

Ընդամին կան բազմաթիվ համադրական պատճառականներ, որոնցից սերվել են -իչ և -ելի ածանցավոր կազմություններ, ինչպես՝ դայթագղեցուցանել-գայթագղեցուցիչ, դօսացուցանել-գօսացուցիչ, ծնուցանել-ծնուցիչ, հեզացուցանել-հեզացուցիչ, հիւանդացուցանել-հիւանդացուցիչ, ուսուցանել-ուսուցանելի և այլն:

Պատճառական բայերը կազմությունը խիստ միօրինակ են. գրաբարում դրանք բոլորն արտահայտվում են բայի անցյալ կատարյալի հիմքի և -ուցան (ոյց + ան), -ե-⁴, -լ ձևույթների համադրումով, ինչպես՝ արդարաց + ուցան + ել = արդարացուցանել, բազմեաց + ուցան + ել = բազմեցուցանել⁵, բոյս + ուցան + ել = բուսուցանել և այլն:

3 Աստվածաշնչյան, V դ. հայ պատմիչների ու եզնիկ Կուրացու լեզվական փաստերը քաղել ենք համապատասխան համաբարբառներից ընդունված համառոտագրություններով՝ Դ. մյուս գործերի և ուշ շրջանների լեզվական փաստերը քաղել ենք «Նոր բառգիրք հայկազան լեզուի» երկհատորյակից: Ընդ որում, V դ. մյուս հեղինակների լեզվական վկայությունների դիմաց նշել ենք այդ հեղինակների համառոտագրված անունները, իսկ ուշ շրջանի լեզվական վկայությունների դիմաց՝ ՆԲՀԼ:

4 -ե- խոնարհիչ ձայնավորի առկայությունը պատճառական բայերի կազմում պատահական չէ: Ինչպես նկատում է Վ. Առաքելյանը, Ե և Ու խոնարհիչներով գերազանցապես կազմվում են անցողական սեռի բայեր, մինչդեռ Ա և Ի խոնարհիչներով՝ անանցողական սեռի բայեր (տե՛ս Վ. Դ. Առաքելյան, Բայասեուերը գրաբարի տարրեր խոնարհումներում. - «Պատմա-բանասիրական հանդես», 1968, №1): Նշենք նաև, որ այս կապակցությունը Գ. Ջահուկյանը գտնում է, որ խոնարհիչ «ձայնավորները ինքնին չեն արտահայտում սեռային և ուրիշ իմաստներ» (տե՛ս Գ. Բ. Ժ ա յ կ յ ու. Сравнительная грамматика армянского языка. Ереван, 1982, с. 165):

5 -Ուցան ածանցավոր կազմություններից բացի՝ գրաբարում պատճառական գործողությունից իմաստն արտահայտվում է նաև վերլուծական եղանակով՝ «տալ բայի դիմավոր ձև-որևէ բայի անորոշ դերբայ» կաղապարով: Օրինակ՝ Ես տաց ածել քեզ ուլ այժեաց ի խաշանց իմոց (Մենդ., ԼԸ, 17): Եւ հօրն իւրում ետ տանել նոյնպէս տասն իշոյ բեռնիս յամենայն բարութեանց եգիպտացւոց (Մենդ., ԽԵ, 23): Ետ նկարել զտաշտ ի պատկեր Մուշեղի ձերմական (Բուդ., 159) և այլն:

Կազմութեան առանձնահատկութեամբ պատճառական բայերը նման են Ե խոնարհման -ան- սոսկածանցավոր բայերին և վերջիններից տարբերվում են միայն ոյց - ուց բառաբաղադրիչ ձևով ընդհանրված: Հմմտ. իջանել - իջուցանել, հատանել - հատուցանել և այլն:

Այսուհանդերձ, պատճառական բայերի շարքում առանձնանում են այնպիսիք, որոնք կազմութեան տեսանկյունից հանդես են բերում անմիօրինակութուն:

Որոշ բայերի -ոյց- բաղադրիչի ց-ն հնչունափոխվել է. այսպես կոչված. սուլական ս-ի կամ գ-ի, ինչպես՝ ելուզանել, ընդելուզանել, ընկուզանել, կորուսանել, փլուզանել, որոնցից առաջինը և վերջինը գրաբարյան աղբյուրներում վկայած են նաև կանոնավոր ձևերով (ելուցանել, փլուցանել): Ընդ որում, ելուցանել-ը վկայած է միայն թարգմանական գրականության մեջ (Պղատ.), իսկ փլուցանել-ը՝ թե՛ թարգմանական գրականության մեջ, թե՛ հայ պատմիչների գործերում:

Կան պատճառականներ, որոնք արդեն V դ. ունեն կազմութեան զուգաձևեր. լեզվական աղբյուրներում վկայած են սրանց թե՛ անկատարի, թե՛ անցյալ կատարյալի հիմքերից կազմված պատճառականներ, ինչպես՝ երգիծուցանել//երգիծեցուցանել, զբօսուցանել//զբօսեցուցանել, զեղծուցանել//զեղծեցուցանել, իջուցանել//իջեցուցանել, լսեցուցանել//լուուցանել և այլն: Հմմտ. Արժան է մեզ զբօսուցանել զնա և ուրախ առնել որսովք (Բուդ., 44) և Աստուած զբօսեցուցանէ զնա յուրախութեան սրտի իւրոյ (Ժող., Ե, 19): Զի մի առ ոտն կոխեսցեն զնոսա և դարձեալ երգիծուցանիցեն զձեզ (Մատթ., է, 6) և Զիք ինչ, որ այնպէս երգիծեցուցանէ և հեղձուցանէ...զնա (Ոսկ.): Նմանագոյնք արդեօք եբրայեցւոցն պատմագրաց ի վերուստ ի քեզ իջուցանեմ անսխալ (Խոր., 12) և Փայլատակունս յիրկնից իջեցուցանել (Ոսկ.): Առեալ մեկուսի զմարզն՝ զեղծուցանէր (Եզնիկ, 257) և Այլև համօրէն զԱսորեստանեայց պետութիւնն զեղծեցոյց (Եւս.): Առ յականէ տեսողացն և առ յունկանէ լսողացն զտեսիլ իւր և զբան իւր լսեցուցանէր (Եփր.) և Վասն այսորիկ բարիոք լուոյց նմա զպտպանձեալն (Եփր.) և այլն:

Որոշ պատճառական բայեր զուգաձևեր ունեն տարածամանակյա կտրվածքում, որտեղ ավելի ուշ շրջանի կազմութիւններն աչքի են ընկնում անկանոնութեամբ, ինչպես՝ եռացուցանել//եռուցանել և այլն: Հմմտ. Եռացոյց մկունս յանդս նոցա (Ա թագ., է, 6) և Եռուցին կախսայ ձիթով (ՆԲՀԼ):

Զուգաձևեր չպետք է համարել այն պատճառականները, որոնք սերվում են միևնույն արմատից կազմված տարբեր (պարզ և ածանցավոր) բայերից, ինչպես՝ յօգել-յօգեցուցանել և յօգանալ-յօղացուցանել, յօժարիմ-յօ-

Վերլուծական պատճառականներ են կազմում նաև մի երկրորդ ճանապարհով, որտեղ հարաբերի հետ կիրառվում են հենց պատճառական բայեր: Իրանցից են՝ աստակա//ի փորձ//խրախոյս-մատուցանել, ի ստենէ հատուցանել, ընդ թիւ թափանցուցանել, յապականութիւն//յապուչ//ի փախուստ//յաւեր//թիկունս//ի թուխ դարձուցանել, ի թուխ զգեցուցանել, արտօսը-կաթեցուցանել//թորեցուցանել, ճեպս//ի հրաժեշտի//ի հարկի//ընդ հարկալ//պարապ//գիթաթաւ-կացուցանել և այլն:

Վերլուծական պատճառականներին կառուցվածքային և արժույթային առանձնահատկութիւնները մասին տե՛ս Գ. Խ ա չ ա տ ը յ ա ն. Գրաբարի վերլուծական լայնրի արժույթը. Երևան, 2000, էջ 242-264:

ժարեցուցանել և յօժարանալ-յօժարացուցանել, շառագունիմ-շառագունեցուցանել և շառագունանալ-շառագունացուցանել, շնչիմ-շնչեցուցանել և շնչանալ-շնչացուցանել, ողջախոհիմ-ողջախոհեցուցանել և ողջախոհանալ-ողջախոհացուցանել, սովիմ-սովեցուցանել և սովանալ-սովացուցանել: Հմմտ. նաև՝ խենեշեցուցանել//խենեշացուցանել, յիմարեցուցանել//յիմարացուցանել և այլն:

Ձուգաձևեր չպետք է համարել նաև այն պատճառականները, որոնք կազմությամբ, ճիշտ է, զուգաձևերի տպավորություն են թողնում, սակայն դրանց իմաստներից դժվար է հզրակացնել, որ սերվում են տարարմատ (բնականաբար տարիմաստ) բայերից, ինչպես՝ այրացուցանել և այրեցուցանել, բազմացուցանել և բազմեցուցանել, դիացուցանել և դիեցուցանել, զգացուցանել և զգեցուցանել, նայացուցանել («խոնավացնել») և նայեցուցանել («նայել տալ»), ստուարացուցանել և ստուերացուցանել և այլն:

Մի շարք պատճառականներ տարբերակներ ունեն միևնույն բայարմատի հնչյունափոխված ձևերով, ինչպես՝ առոգացուցանել//առոյգացուցանել, բաղձացուցանել//բաղձնացուցանել, դէրացուցանել//դիրացուցանել, դղորդացուցանել//դղրդեցուցանել, թմրեցուցանել//թմրացուցանել, խրախացուցանել//խրախնացուցանել, յուլացուցանել//յուղացուցանել, փրթուցանել//փրծուցանել և այլն:

Գրաբարում վկայված են համադրական պատճառականներ՝ նույնիսկ երեք տարբերակներով, ինչպես՝ ընկողմացուցանել//ընկողմանացուցանել//ընկողմնացուցանել և այլն:

Հարկ է նկատել, որ նշված զուգաձևերի մի մասը առկա է գրաբար զարդացման համաժամանակյա, իսկ մյուս մասը՝ տարաժամանակյա կտրվածքներում:

Գրաբարյան մի շարք պատճառականներ էլ, սերվելով Ե խոնարհման բայերից, ունեն ոչ միայն Ե, այլ նաև Ա խոնարհման բայերից սերված պատճառականներին հատուկ զուգաձև: Հակառակ երևույթը նկատվում է Ա խոնարհման բայերից սերված պատճառականների շարքում: Գրանցից են՝ բթել-բթեցուցանել, բայց և բթացուցանել, գազանանալ-գազանացուցանել, բայց և գազանեցուցանել, հովանանալ-հովանացուցանել, բայց և հովանեցուցանել, հրապուրել-հրապուրեցուցանել, բայց և հրապուրացուցանել, ներքինանալ-ներքինացուցանել, բայց և ներքինեցուցանել, շառաւիղել-շառաւիղեցուցանել, բայց և շառաւիղացուցանել, պատահիմ-պատահեցուցանել, բայց և պատահացուցանել և այլն:

Գրաբարի պատճառական բայերը միօրինակ են ոչ միայն կազմության, այլ նաև սեռի քերականական կարգի գրսևորման տեսանկյունից. դրանք բոլորը անցողական (ներգործական) սեռի բայեր են: Ասվածն ինքնին նշանակում է, որ բոլոր պատճառական բայերը՝

1. պահանջում կամ ենթագրում են առնվազն մի ուղիղ խնդիր, որ սովորաբար արտահայտվում է հայցական հոլովով: Օրինակ՝ Կոչել զկիինն յարքունիս և թագավորացուցանել զնա (Եսթ., Ա, 11): Ձի զգաստացուցեն զմանկամարդսն այրասէրս լինել (Տիտ., Բ, 4): Եւ հրաման ետուն մեծ եպիսկոպոսպետն Վրթանէս հանդերձ թագաւորաւն Արշաւրայ և Անդով-

կայ՝ սնուցանել զպատանեակն զԱրտաւազգ (Բուզ., 25): Մի՛թէ... այսօր նեղելթիւնս ինչ զմեզ իմաստնացոյց (Եղիշէ, 195) և այլն:

2. Խոնարհվում են թե՛ ներգործածե և թե՛ կրավորած՝ արտահայտելով, համապատասխանաբար, ներգործական և կրավորական սեռերի քերականական իմաստներ: Փաստորեն, ի տարբերութիւն գրաբարյան մի շարք բայերի, պատճառական բոլոր բայերի խոնարհման ձևերը և սեռի քերականական իմաստները հանդես են գալիս որպէս ձևի և բովանդակութեան ամբողջականութիւն: Օրինակ՝ յիշեցոյց նշանակում է «հիշեցրեց», մինչդեռ յիշեցուցաւ նշանակում է «հիշեցվեց»: Հմմտ. Հատոյց զհատուցումն մարդկան (Ես., ԾԹ, 17) և Հատուցումն հատուցաւ ի մարդկանէ (Տոլբ., ԺԴ, 12) և այլն:

Նկատելի է, սակայն, որ գրաբարի պատճառական մի շարք բայերի (առողջացուցանել, արժանացուցանել, թխացուցանել, լիացուցանել, կազացուցանել, յղացուցանել, ներքինացուցանել, սեւացուցանել, սպիտակացուցանել, քաղաքացուցանել և այլն) կրավորական սեռի քերականական իմաստն արտահայտվում է այդ բայերի ոչ թե կրավորած և խոնարհման ժամանակաձևերով, այլ դրանց սկզբնատիպ չեզոքների անդամ կամ դիմավոր ձևերով: Հմմտ. կուրացոյց գաչսն իմաստնոց (Բ Օրէն., ԺԶ, 19) և Տիրան կուրացաւ (փոխանակ՝ կուրացուցաւ-Գ.Խ.) ի նմանէ (Խոր., 252): Մի՛ տրտմեցուցանե՛ր զոք և մի՛ տրտմիր (փոխանակ՝ մի՛ տրտմեցուցանիր Գ.Խ.) յումեքէ (Նէղոս) ներդործական և կրավորական նախադասութիւնները: Այսպէս նաև՝ յղացուցանել զնա և յգանալ ի նմանէ, քաղաքացուցանել զանապատս (ՆԲՀԼ) և քաղաքանալ ի միանձանց, լիացուցանել զուսումնասիրութիւն ինեւ (ՆԲՀԼ) և լիանալ ի նոցանէ հացիւ (ՆԲՀԼ), սքանչելացոյց Տէր զսուրբն (Խոր., 247) և սքանչելանայ յինէն: Նշված և նմանատիպ բազմաթիւ այլ ներդործական ու կրավորական կառույցների համեմատութիւնը լավագոյնս վկայում է այն մասին, որ գրաբարում ոչ բոլոր համադրական պատճառական բայերի կրավորած և խոնարհման տարբերակների կիրառումն էր ընդունված⁶:

Պատճառական բայերը սերվում են՝

1. չեզոք սեռի բայերից, ինչպէս՝ զեռալ-զեռացուցանել, էանալ-էացուցանել, ընդարմանալ-ընդարմացուցանել, ընդոստնիմ-ընդոստուցանել, կեալ-կեցուցանել, սաստկանալ-սաստկացուցանել, սնանիմ-սնուցանել, տաղտկանալ-տաղտկացուցանել, ցնորիմ-ցնորեցուցանել և այլն⁷: Այս կապակցութեամբ պետք է նշել, որ համադրական պատճառականներն առաջին հերթին սերվել են չեզոք սեռի բայերից՝ ամենայնհամար անույնութեամբ:

6 Նույն լեզվական իրողութիւնը որդեգրել է նաև ժամանակակից Հայերենը: Հմմտ. էն էլ ասեմ, որ այս տարի Կարժանացնենք քեզ մեղալի (Պ. Ս., 3, 95) և Եվ ամեն մի երկիր Արժանացել (փոխ.՝ արժանացվել-Գ. Խ.) հարկի, լոկ այստեղ է դտել վերջին հասցեն, տունը (Պ. Ս., 1, 10): Փտող ոսկորի ֆոսֆորափայլը, որ չի կուրացնում միմիայն նրանց, որոնց աչքերի ցանցաթաղանթը ջնարակված է նույն այդ ֆոսֆորով (Պ. Ս., 4, 282) և... Հզոր Սեւդան գարդմանացոց պարծանքը և թշնամիների սարսափը, ապիրատ փեսայից կուրացած (փոխ.՝ կուրացված-Գ.Խ.), յուր ծառաների շնորհիւ է միայն ձեր աչքին երևում (Մ. Գ. Մ., էջ 91):

7 Ի դեպ, միևնույն իրողութիւնը նկատելի է նաև արդի Հայերենում: Այս կապակցութեամբ Մ. Ասատրյանը գրում է, որ՝ ներդործականներից -ցն- ածանցով կալմոված «բայերի թիվը սահմանափակ է և չի անցնում մի քանի տասնյակից» (տե՛ս Մ. Ե. Ա. ս. ա. տ. ր. յ. և ն. Ժամանակակից Հայոց լեզվի ձևաբանութեան հարցեր. Հ. Գ, Երևան, 1977, էջ 179):

յամբ, լեզվում վերջիններիս արտահայտած բայիմաստը անցողական սեռի տարբերակով արտահայտելու անհրաժեշտությունը պայմանավորված: Պատահական է, որ թվով հազարից ավելի պատճառականների մեծագույն մասը սերվել է համարմատ չեզոքներից: Օրինակ՝ կեցոյց զնոսա ի ձեռաց ատելեաց նոցա (Սաղմ., ՃԵ, 10): Ոչ ոք իցէ, որ ընդոստուցանիցէ զգիշակերս (Բ Օրէն., ԻԸ, 26): Եւ այնոցիկ մանաւանդ թէ լուրն զլսելիս մեր տաղտկացուցանէր (Խոր., 90) և այլն:

2. Ներգործական սեռի բայերից, ինչպես՝ գալարել-դալարեցուցանել, դասել-դասեցուցանել, ծալել-ծալալեցուցանել, ճնշել-ճնշեցուցանել, միաւորել-միաւորեցուցանել, յուրովել-յուրովեցուցանել և այլն: Օրինակ՝ Զտկարադոյնն երկաքանչիւր հուր և ջուր ծալալեցուցանեն (Պղատ.): Գալարեցուցանեն զաղիս իմ (Մանդ.) և այլն:

3. Այսպես կոչված, հասարակ բայերից, որոնք լինում են լրիվ և մասնական⁸: Այսպիսի պատճառական բայերից են՝ ագուցանել, ամացուցանել, զգեստաւորացուցանել, իմացուցանել, խոստովանեցուցանել, խօսեցուցանել, ծնուցանել, կամեցուցանել, մոռացուցանել, յանդգնեցուցանել, շահեցուցանել, ուսուցանել և այլն: Օրինակ՝ Մոռացուցէ նոցա զսովորութիւն (Ագաթ., 161): Ուսուցեր զձեռս իմ ի պատերազմ (Սաղմ., ԺԵ, 35) և այլն:

4. Չորրորդ խումբ են կազմում այն պատճառականները, որոնք չեզոք կամ ներգործական սեռի բայերից չեն սերվում, իսկ եթե նույնիսկ սերվել էլ են, ապա տվյալ չեզոք ու ներգործական բայերը գրաբարյան հուշարձաններում կամ չեն վկայվել, կամ մեզ չեն ավանդվել: Դրանցից են՝ ահացուցանել, ամիրացուցանել, արիւնացուցանել, գանգաչեցուցանել, խեցեցուցանել, հողմացուցանել, մռայլեցուցանել, վայրացուցանել, տաճկացուցանել և այլն, որոնց թիվը վեց տասնյակից չի անցնում:

Պատճառական բայերի շարքը համարվել է նաև նախածանցավոր և նախդրավոր կազմութիւններով, որոնց բաղադրութեանը ակտիվորեն մասնակցում են արտ, բաց, ներ, ստոր, գ և այլ բառակազմական ձևույթներ: Այդ բայերից են՝ արտակացուցանել, բացուսուցանել, զգօսացուցանել, գեռացուցանել, ներհմտեցուցանել, ստորիջուցանել և այլն:

Անշուշտ սխալ կլինեի կարծել, թե գրաբարյան բոլոր չեզոք և ներգործական բայերից են սերվել պատճառական տարբերակներ: Ահանալ, աչառել, բաղդատել, գահակալել, գանձել, գանգատիմ, գեղազարդել, երեքկնել, երրորդել, գայրագնիմ, զմուսել, զուղաբերիմ, թելագրել, ժուժկալել, իսկաբանել, խարտեչանալ, խարտել, խրթնանալ, ծայրատաչել, կեղեքել, կերկերիմ, կոփել, յուզել և բազմաթիվ այլ բայեր իրենց պատճառական տարբերակը չունեն, կամ, եթե ունեցել են, մեզ չեն ավանդվել:

Իմաստային տեսանկյունից բառային մակարդակի բոլոր միավորները մենիմաստ են կամ բազմիմաստ: Պատճառական բոլոր բայերը ևս այս տեսանկյունից բացառութիւն չեն կազմում. հանգիստում են թե՛ մենիմաստ և թե՛ բազմիմաստ պատճառականներ, որոնցից վերջիններս անհամեմատ մեծ թիվ են կազմում և, իբրև կանոն, իրենց բազմիմաստութիւնը հիմնականում ժառանգում են այն չեզոք կամ ներգործական բայերից, որոնցից

⁸ Տե՛ս Գ. Խ ա չ ա տ ը յ ա ն. Գրաբարի հասարակ բայերը. - Միջազգային գիտաժողով նվիրված Ա.Մեյի ծննդյան 130-ամյակին (Ջեկուցումների թեզիսներ). Երևան, 1996:

սերվել են: Այսպես՝ պարապել բայը բազմիմաստ է, նշանակում է՝ բազմիմաստ է նաև նրանից սերված պարապեցուցանել պատճառականը, որը, սենի խնդիր պահանջելուց բացի, պարտադիր կերպով պահանջում է նաև մի բնութայն խնդիր՝ արտահայտված քերականական տարբեր արտահայտութայն միջոցներով՝ նայած այն բանին, թե պարապեցուցանել-ի ո՞ր իմաստի պահանջով է կիրառվել՝ «վարժեցնե՞լ», «սովորեցնե՞լ», «հեռացնե՞լ», «զբաղեցնե՞լ», թե՞ «դատարկել տալ»: Նշված բայիմաստներով պայմանավորված՝ պարապեցուցանել-ի պահանջած բնութայն խնդիրը կարող է արտահայտվել «ԱՌ-Հայցական Հոլովածեւ» (պարապեցուցանել զբնութիւնն առ ինքն), «ԸՆԴ-Հայցական Հոլովածեւ» (պարապեցուցանել զինքն ընդ կրթութիւն), «Ի-Հայցական Հոլովածեւ» (պարապեցուցանել զձեռս ի սպանութիւն) կապական կապակցություններով, ինչպես նաև տրական (պարապեցուցանել զանձինս քննութեան) և բացառական (պարապեցուցանել զինքեան ի սպասաւորութենէ) Հոլովածեւերով: Բազմիմաստութայն պայմանավորված՝ պատճառական բայերի ստորադաս անդամներ են դառնում տարբեր իմաստակիր, հետևաբար նաև տարբեր ձևերով կառավարվող բառեր: Հմմտ. Թողացուցանել ինձ զերկուս ամիսս (Դատ., ԺԱ, 37), թողացուցանել զձեռն ի ծառայից (Յեսու, Ժ, 6) և թողացուցանել ումբ գործել (ՆԲՀԼ), վերացուցանել զխեղդ յինէն (ՆԲՀԼ), վերացուցանել զվիշապն կարթիւ (Յովբ, Խ, 20) և վերացուցանել զգեղարզն ի վերայ Յովնաթանու (Ա Թագ., Ի, 33) և այլն: Նկատելի է, որ միևնույն պատճառականի արժույթի ձևաիմաստային դրսևորումները կարող են առաջ բերել նույնիսկ հականշություն:

Բազմիմաստ պատճառականներից են՝ անցուցանել, բարձուցանել, բաւականացուցանել, բզխեցուցանել, զանցուցանել, զարթուցանել, զգուշացուցանել, զերծուցանել, զիջուցանել, զօրացուցանել, լիացուցանել, ծանրացուցանել, կորուսանել, հանգուցանել, ննջեցուցանել, տարակուսեցուցանել, քունեցուցանել և այլն: Օրինակ՝ զարթուցանել - զձեզ ի քնոյ (Բ Պետր., Ա, 13), զնա ի վերայ մեր (Բարուք, Բ, 9) և զգինուորս ի պատերազմ (Ածար.): Հանգուցանել - զՄաւուղ յայսոյ (Ա Թագ., ԺԶ, 23) և զբանն ի փառաւորութիւն (Ոսկ.): զիջուցանել - զԱբրահամ ի հայրապետութենէ (Ագաթ., 337) և զամբոխեալսն ի հաշտութիւն (ՆԲՀԼ); անցուցանել - զանօրէնութիւն ի ծառայէ քումմէ (Բ Թագ., ԻԴ, 10), զինչ ընդ իս (Ովս., ԺԱ, 8) և զնա զբազում արամբք (Փարպ., 109); դարձուցանել - զբարկութիւն ի ձէնջ (Բ Մնաց., Լ, 8), զսուգ ի խնդութիւն (Երեմ., ԼԱ, 13), զվէմն ի վտակս (Սաղմ., ԾԺԳ, 8) և զարմտիս դմա (Գ Թագ., Ը, 6), ընդելուզանել - զչրթունս քո ընդ շրթունս իմ (Առակ., ԻԳ, 16) և զթագ ակամբք (Եւս.) և այլն:

Անկասկած, բոլոր բազմիմաստ բայերից սերված պատճառականները չեն պահպանում բազմիմաստությունը: Այսպիսի ֆանալ չեզոք լայն ունի մի շարք իմաստներ: Դրանցից համարմատ պատճառականին է անցել միայն բուն՝ «ջանալ տալ» իմաստը, որով եղանակավորվում է անորոշ դերբայով արտահայտված գործողությունը: Օրինակ՝ Ջանացուցանել զոք արտաքս ընթանալ (Եւագր.): Նույնը կարելի է ասել նաև յանգունիմ րազ-

միմաստ չեզոքից սերված յանդգնեցուցանել պատճառականի մասին, ինչպես յանդգնեցուցանել զոք գլխատել զարգարն (ՆԲՀԼ):

Սրան հակառակ՝ կան պատճառական բայեր, որոնք թեև բազմիմաստ են, սակայն սերվել են ոչ թե բազմիմաստ, այլ մենիմաստ ելակետից: Այգպիսին է, օրինակ, իւրացուցանել պատճառականը, որը գրաբարի տարածամանակյա կտրվածքում նշանակում է ոչ միայն «իրենը դարձնել», այլ նաև «զրավել», «տիրել» և այլն, ինչպես՝ Տիրեալ Աղուանից և եկեալ ի Պարտաւ իւրացուցանէ իսկոյն (ՆԲՀԼ): Իւրացուցանէ հոգին զամենայն ինչ մարմնոյն (ՆԲՀԼ): Զամենայն կիրս մեր իւրացոյց բաց ի մեղաց (ՆԲՀԼ) և այլն:

Գրաբարի բազմաթիվ պատճառականներ միմյանց նկատմամբ գտնվում են ձևաիմաստային փոխհարաբերության մեջ՝ դառնալով՝

1. Համանիշներ (ընդ որում, համանշային գաշտ կարող են կազմել երկու կամ ավելի ոչ միայն համադրական, այլև համագրական և վերլուծական սլատճառականներ), ինչպես՝ պարապեցուցանել-պարապ կացուցանել, ճեպեցուցանել-ճեպս կացուցանել, ճաշակեցուցանել-տալ ճաշակել, վրկեցուցանել-ապրեցուցանել, զղջացուցանել-սրտաջացուցանել և այլն,

2. Հոմանիշներ, որոնք անհամեմատ ավելի շատ են, քան թե ձևաիմաստային դաշտեր կազմող մյուս խմբերի պատճառականները, ինչպես՝ փոքրացուցանել-փոքրկացուցանել, անջատեցուցանել-հեռացուցանել, զանգիտեցուցանել-երկուցանել, զգօնացուցանել-զգուլացուցանել, թխածեցուցանել-տրտմեցուցանել-տխրեցուցանել և այլն,

3. Հականիշներ, ինչպես՝ թխացուցանել-սպիտակացուցանել, վերացուցանել-իջուցանել, մեռուցանել-ողջացուցանել, թեթեւացուցանել-ծանրացուցանել, հեռացուցանել-մատուցանել, զօրացուցանել-անզօրացուցանել և այլն,

4. Համանուններ, որոնք ձևաիմաստային մյուս բառախմբերի համեմատությամբ գրաբարում հազվադեպ են, ինչպես՝ ստացուցանել («ի սուտ հանել») և ստացուցանել («ժառանգել տալ», «ստանալ տալ»): Նկատենք, որ բերված զույգը ներկայացնում է մասնակի համանունություն (դրանք համադիր են, սակայն համահունչ չեն):

Գրաբարի համադրական պատճառական բայերն օժտված են արժույթի բոլոր արտահայտություններով՝ ենթակառուցությամբ, կոչականառությունամբ, ստորոգելիառությունամբ, ինդերառությունամբ և պարագառությունամբ, սակայն, կախված իրենց բառիմաստից, դրանք աչքի են ընկնում արժույթային տարբեր գրսևորումներով:

Անխտիր բոլոր սլատճառական բայերը ենթակառու են⁹: Ասվածն ինքնին նշանակում է՝ սլատճառական բոլոր բայերը հնարավորություն ունեն կիրառվելու երկկազմ նախադասությունների կազմում: Այստեղ նրանք կատարում են նախադասության սլարտադիր բաղադրիչներից մեկի՝ կազ-

9 Եթե դիմավոր պատճառականներին հատուկ է ուղղական հոլովաձևով արտահայտված ենթակառությունը, ապա անդեմ պատճառականները զորություն ունեն կապակցվելու փոխակերպված (կողմնակի) ենթակաների հետ: Այս դեպքում վերջիններս արտահայտված են սեռական և այլ հոլովաձևերով: Օրինակ՝ Որոց անդին իսկ դառնացուցեալ զԱրարիչն (Ագաթ., 162): Եթէ սնուցեալ իցէ նորա մանկունս իւր և ոչ թարթափեցուցեալ իցէ զնոսս (Եփր.), Որպէս չարախօսաց և մերոց իմացուցեալ ի ձեզ զմէնջ (Փարս., 78) և այլն:

մուծվածը պարզ ստորոգյալի շարահյուսական գործառույթ: Դիմավոր պատճառականների հետ կապակցվող ենթակաները՝

1. կա՛մ ունեն բառային արտահայտություն: Օրինակ՝ Ոչ թողոյր, եթէ ոք անօթ ինչ անցուցանիցէ ընդ տաճարն (Մարկ., ԺԱ, 16): Աստուած զբոսացուցանէ զնա յուրախութեան սրտի իւրոյ (Ժող., Ե, 19): Կէսք սուսերօք իբրև զմենամարտիկս զսաստկանդամ երամս վարազացն զլորեցուցեալ սպանանեն (Փարպ., 10) և այլն,

2. կա՛մ զեղչված են՝ տվյալ նախադասության բովանդակության պլանում ենթադրվելու պատճառով: Պատճառական բայերով ձևավորված երկկազմ նախադասության ենթական կարող է զեղչված լինել երկու դեպքում:

Մի դեպքում այդ կառույցների ստորոգյալն արտահայտված է առաջին կամ երկրորդ դեմքի եզակի կամ հոգնակի թվի պատճառական բայաձևերով, որոնք ներունակ են արտահայտելու ոչ միայն գործողության, այլ նաև տվյալ գործողությունը կատարող ենթականի դիմային գաղափար¹⁰: Օրինակ՝ Կացուցի (ես - Գ.Ն.) զնա տէր ամենայնի (Ագաթ., 44): Ըստ օրինակի գրելոցս առ ի մէնջ ի կատարումն դարձուցաք (մեք - Գ.Ն.) (Ագաթ., 470): Բուսուցանես (դու - Գ.Ն.) յերկրէ զոսկերս մարդկան, դալարեցուցանես (Ադաթ., 52): Անմունչովքն բարկացուցանէք (դուք - Գ.Ն.) զԱստուած ձեր (Ագաթ., 261) և այլն:

Մյուս դեպքում այդ կառույցների ստորոգյալն արտահայտված է 3-րդ դեմքի եզակի կամ հոգնակի թվի պատճառական բայաձևով, որի ենթական թեև հիշատակված չէ, սակայն ենթադրվում է այդ կառույցին նախորդող որևէ նախադասության մեջ բառային արտահայտություն ունենալու հիման վրա: Օրինակ՝ Եւ եթէ ժպրհիցի ոք ասել, զանձն տգիտաբար կորուսանէ (Եղիշէ, 167): Մասն է նա (արեգակն - Գ.Ն.) աշխարհիս արարածոց, ի բազում մասանց մի մասն որոշեալ է. կէսքն ի վերոյ են քան զնա, և կեսքն ի ներոյ նորա: Ոչ է նա առանձին սուրբ յստակ լուսով, այլ ի ձևն օդոյն հրամանան Աստուծոյ տարածանէ զճառագայթս իւր և հրային մասամբ ջեռուցանէ զամենայն գոյացեալս ի ներքոյ իւրոյ կայանին (Եղիշէ, 167) և այլն:

Մի շարք կառույցներում ենթակառու պատճառական բայի դրական կամ ժխտական խոնարհման դիմավոր ձևը հանդես է գալիս իր իսկ անդեմ ձևի հետ զուգահեռ, որտեղ վերջինս գրավում է նախադաս դիրք՝ արտահայտվելով անորոշ դերբայի գործիական հոլովով¹¹: Օրինակ՝ Բազմացուցանելով բազմացուցից զսրտմտութիւն քո (Մննդ., Գ, 16): Զարթուցանելով զարթուցին զպահապանսն (Դատ., Է, 19): Եւ մեծ է զօրութիւն նորա և արդարացուցանելով ոչ արդարացուցանէ Տէր (Նաւ., Ա, 3):

Անորոշի գործիականով ավելադրությունները¹² ոճական, բայց ոչ արժույթային նշանակություն ունեն: Դրանց միջոցով դիմավոր բայով արտա-

10 Գ. Զահուկյանն այսպիսի ենթականերն անվանում է «ձևական» (տե՛ս Գ. Բ. Զ ա - հ ու կ յ ա ն. Ժամանակակից Հայերենի տեսության հիմունքները. Երևան, 1976, էջ 391):

11 Ի դեպ, կան կառույցներ, որոնց մեջ դիմավոր պատճառականների հետ զուգահեռվում են վերջիններիս սկզբնատիպ բայերի գործիականները, ինչպես՝ Այլև բառնայով բարձուսջիք և արկանելով արկջիք առաջի նորա ի պիտանդոցն խառնելոց (Հուսթ., Է, 16):

12 Գրաբարում ավելադրության դեր է կատարում նաև անորոշ ինքնին, սակայն համարական պատճառականների հետ գործածության նմանատիպ զեպքեր չեն հանդիպում:

Հայտված գործողություններին հիմնականում հաղորդվում է սաստկակա-
նություն, պարտադիրության երանգ:

Ենթակառուցված տեսանկյունից արժույթագրուկ պատճառական բա-
յեր չկան, դրանք, առանց բացառություն, ենթակառու են: Այդպիսիք են
նույնիսկ ենթակառուությամբ արժույթագրուկ չեզոք սեռի բայերից սեր-
ված պատճառականները, ինչպես լուսացուցանել, մթացուցանել և այլն:

Պատճառականների ենթակառու լինելը պայմանավորված է դրանց
բայիմաստային առանձնահատկությամբ. լինելով անցողական բայեր՝
դրանք խոսքի մեջ պարտադիր կերպով պահանջում են երկու առարկա՝ մե-
կը ներգործող (ենթակա), մյուսը՝ ներգործվող (սեռի խնդիր):

Ենթակա չունեն կամ չեն ենթադրում միայն այն համադրական պատ-
ճառականները, որոնք անորոշ-դիմավոր և ընդհանրական-դիմավոր միա-
կզմ նախադասությունների մեջ կատարում են դերադաս անդամի շա-
րահյուսական գործառույթ: Անկասկած, այս դեպքում պատճառական բա-
յերի ենթակառուության տեսանկյունից արժույթագրուկ լինելը չի բխում
այդ բայերի բնությունից, այլ կախված է նշված նախադասությունների
առանձնահատկությունից:

Այսուհանդերձ, կախված իրենց և տվյալ ենթակայի դասային անհամա-
պատասխանությունից¹³, պատճառական բայերը ենթակառուության տե-
սանկյունից հանդես են բերում դործառական սահմանափակություն: Այս-
պես՝ ամիրացուցանել պատճառականը կարող է կապակցվել միայն անձ-
նանիշ ենթակաների հետ, ծփեցուցանել պատճառականը՝ միայն իրանիշ
ենթակաների հետ, ապչեցուցանել պատճառականը չի կարող կապակցվել
իրանիշ և շնչավոր (ոչ անձ) այլ առարկա անվանող ենթակաների հետ և
այլն¹⁴:

Այսպես ուրեմն, դրարարի պատճառական բայերը խմբերի են բաժան-
վում ըստ այն բանի, թե ենթակա դարձող բառերի դասային որ խմբի կամ
խմբերի հետ զորություն ունեն կապակցվելու: Այս կամ այն պատճառա-
կան բայը կարող է կապակցվել՝ ա) անձնանիշ, բ) կենդանանիշ (շնչավոր
այլ առարկաներ անվանող), գ) իրանիշ (վերացական կամ թանձրացական
առարկա անվանող) կամ դ) տարբեր դասեր անվանող ենթակաների հետ:

Որոշ պատճառականներ, որոնք ներկայացնում են դասային առանձին
խումբ, ենթակաների հետ կապակցվելիս հանդես են բերում դիմային սահ-
մանափակություն, որը դրսևորվում է այդ բայերի՝ եզակի և հոգնակի
թվերի առաջին և երկրորդ դիմային ձևերով արտահայտված ենթակաների
հետ կապակցվելու հնարավորության բացակայությամբ: Խոսքը վերաբե-
րում է այն պատճառականներին, որոնց անվանած գործողության համար
ենթակա է ենթադրվում միայն շնչավոր (ոչ անձ) կամ իրանիշ (թանձրա-
ցական կամ վերացական) առարկա անվանող բառ: Օրինակ՝ ծփեցուցանել
պատճառականը դիմասահմանափակ է. այն առաջին և երկրորդ դիմային
ձևերով չի դործածվում, քանի որ նրա արտահայտած հատկանիշը կարող է

13 Արդի հայերենի բայերի դասային խմբերի մասին տե՛ս Գ. Բ. Ջ ա հ ու կ յ ա ն.
Նշվ. աշխ., էջ 462-466:

14 Այս դեպքում փոխարերական իմաստները հաշվի չենք առնում:

ստորագրվել միայն ոչ անձ անվանող և իրանիշ առարկաներով արտահայտված ենթականերին:

Լեզվական փաստերի դիտարկումը ցույց է տալիս, որ՝

1. պատճառական բայերի հիմնական մասը զորություն ունի պահանջելու միայն անձ անվանող ենթակա: Այդ բայերի միջոցով անվանվում են մարդկային հարաբերություններ արտահայտող, մարդուն հատուկ գործողություններ, ինչպես՝ ամուսնացուցանել, զեկուցանել, խոստացուցանել, ծանուցանել, կերպաւորեցուցանել և այլն: Օրինակ՝ Աղօթս սրբազանս կատարեալ՝ բոկացուցանեն զնա (Դհոն.): Եկեղեցացոյց արքայ Սողոմոն զամենայն ծերս Իսրայէլի (Գ Թագ., Ը, 1): Զեկուցանելով յապա եկելոցն ծանօթացուցուք սորին աջողագոյն տեսութեանց (ՆԲՀԼ): Բժշկեցուք զհոտտելիս, զի մի իգացուցուք (Ածաբ.): Ապա եթէ դու զգուշացուցանիցես զարդարն,....կելով կեցցէ (Եզեկ., Գ, 21) և այլն:

2. Պատճառական բայերի մի ստվար խումբ էլ բաղմադաս է՝ զորություն ունի պահանջելու տարբեր դասանիշ առարկաներ անվանող ենթակաների հետ: Այս դեպքում ենթակա կարող են դառնալ մեկից ավելի դասերի պատկանող առարկաներ:

Տարբեր դասանիշ առարկաներ անվանող ենթակաների հետ կարող են կապակցվել այնպիսի պատճառականներ, ինչպիսիք են՝ աղտեղացուցանել, անզգայացուցանել, անցուցանել, արգարացուցանել, զգաստացուցանել, զօրացուցանել, ընգարմացուցանել, թխացուցանել, թուլացուցանել, խաղացուցանել, ծուլացուցանել, կատաղեցուցանել և այլն: Օրինակ՝ Բագուկ իմ զօրացուցէ զնա (Սաղմ., 2Ը, 22): Այսպիսի դիպուած...ի յաղթութիւն զՀայոց գունդն զօրացոյց (Խոր., 267): Նոքա զօրացուցանէին զխորհուրդս քո (Եզեկ., Իէ, 9):

Նկատելի է, որ այս խմբի պատճառականների մեծ մասի պահանջած ենթականերից մեկը դարձյալ պարտադիր կերպով անձնանիշ է: Պատճառն այն է, որ միջնորդավորված գործողություն են կատարում գերականացուցանելու անձ ցույց տվող գոյականներն ու դերանունները: Այդ բայերից են՝ աղտեղացուցանել, բթացուցանել, գլորեցուցանել, գայրացուցանել, խոովեցուցանել, կափուցանել և այլն: Հմմտ. Կէսք զմարտիկս գլորեցուցեալ սպանանեն (Փարպ., 10) և Երիւար գլորեցոյց զնա (ՆԲՀԼ): Դառնայցեն (նոքա - Գ.Խ.) յաստուածս օտարոտիս և գայրացուցանիցեն զիս (Բ Օրէն., ԼԱ, 20) և Այն իսկ առաւել գայրացուցանէ զԱստուած (ՆԲՀԼ): Յնորք անհնարին երազոց խոովեցուցանէին զնոսա (Սաղմ., Ի, 10) և այլն:

Այս կամ այն դասային խումբը ներկայացնող ենթակա ենթադրող պատճառականները դասային ուրիշ խումբ ներկայացնող ենթակա կարող են առնել փոխաբերական իմաստով գործածվելու դեպքում: Հմմտ. Զոսկերսն Սաւուղայ և Յովնաթանու արձանացուցին անդ այլազգիքն (Բ Թագ., ԻԱ, 12) և Զի եթէ ստութիւնն մեր և ապիրատութիւնն արձանացոյց զնորա իրաւունս (Ոսկ.):

Գրաբարի համադրական պատճառական բայերի և դրանց ենթակաառական արժույթի ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ՝

1. Թեև այդ բայերի թիվը գրաբարում հասնում է հազարի, սակայն դրանք բոլորն էլ և խոնարհման ներգործական սեռի ածանցավոր բայեր են:

2. Այդ բայերի հիմնական մասը սերվել է ներգործական, չեզոք կամ, այսպես կոչված, հասարակ բայերից, և միայն սակավաթիվ պատճառականների սկզբնատիպ բայեր են, որ կամ գրավոր աղբյուրներում չեն վկայվել, կամ մեզ չեն ավանդվել:

3. Համադրական պատճառականներից շատերը մյուսների հետ դառնում են ձևախմբաստային փոխհարաբերության մեջ, որտեղ հատկապես մեծ թիվ են կազմում հոմանիշ, ապա հականիշ բառերը:

4. Գրաբարյան պատճառականներն աչքի են ընկնում արժույթային տարրեր հնարավորություններով, սակայն, իբրև կանոն, դրանք բոլորն էլ պարտադիր կերպով պահանջում են առնվազն մեկ ենթակա և մեկ սեռի խնդիր:

5. Ենթակառուցության տեսանկյունից պատճառական բայերը սահմանափակություն ունեն միայն դասային այս կամ այն խումբը ներկայացնելու տեսանկյունից:

6. Դիմավոր միակզմ նախադասությունների մեջ այս բայերի ենթակառուցումը արժույթագուրկ լինելը պայմանավորված է միայն տվյալ խոսքային իրադրություններով:

ՀԱՄԱՌՈՏԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Աղաթ. — Ազաթանգեղայ Պատմութիւն Հայոց. Տիփլիս, 1909:

Ածար. — Գրիգոր Նաղիանյացի:

Բուդ. — Փաւստոսի Բուզանդացւոյ Պատմութիւն Հայոց. Ս. Պետերբուրգ, 1883:

Գիրք Աստուծաշունչք Հին և Նոր կտակարանաց. Վենետիկ, 1860:

Եղնիկ — Եզնկայ Կողբացւոյ Եղծ աղանդոց. Վենետիկ, 1826.:

Եղիշէ — Եղիշէի Վասն Վարդանայ և Հայոց պատերազմին. Երևան, 1957:

Եւագր — Եւագր Պոնտացի:

Եւս. — Եւսերիոս Կեսարացի:

Եփր. — Եփրեմ Ասորի. Մեկնություններ, ճառեր:

Խոր. — Մովսիսի Խորենացւոյ Պատմութիւն Հայոց. Տիփլիս, 1913:

Մանդ. — Յովհան Մանդակունի:

Մ. Գ. Մ. — Մուրացան. Գևորգ Մարգպետունի. Երևան, 1977:

ՆԲՀԼ — Նոր բառգիրք հայկազգեան լեզուի. հ. 1-2. Վենետիկ, 1836-1837:

Ոսկ. — Յովհան Ոսկերեան:

Պ. Ա., 1, 3, 4 — Պարույր Սևակ. Երկերի ժողովածու 6 հատորով. հ. 1, Երևան, 1972, հ. 3, Երևան, 1973, հ. 4, Երևան, 1973:

Պղատ. — Պղատոն:

ՊԲՀ — «Պատմա-բանասիրական հանդես»:

Փարս. – Ղազարայ Փարսեցւոյ Պատմութիւն Հայոց և Թուրք առ Վահան Մամիկոնեան. Տիղիս, 1904:

СУБЪЕКТНАЯ ВАЛЕНТНОСТЬ СИНТЕТИЧЕСКИХ КАУЗАТИВНЫХ ГЛАГОЛОВ ГРАБАРА

ГУРГЕН ХАЧАТРЯН

Р е з ю м е

В грабаре значение каузативности проявляется двояко: с помощью аффиксации и сложением слов. По строению все синтетические каузативные глаголы грабара производные и все они глаголы действительного залога. Изучение субъектной валентности каузативных глаголов свидетельствует о том, что все подобные глаголы могут сочетаться с субъектом, причем, в основном со значением личности. Несочетаемость тех или иных каузативных глаголов с субъектом обусловлена определенной речевой ситуацией. Не требуют субъекта только те каузативные глаголы, которые употребляются в качестве главного члена в односоставных – неопределенно-личных и обобщенно-личных предложениях.